—Ֆենովայի պրոֆեսորներից մէկը Revue des Revues հանդիսի մէջ գրած մի յօդուածով ապացուցանում է, որ Ամերիկայի գիւտի իսկական հեղինակը Ֆլորենցայի մի գիտնական է, Պաօլո Տոսկանելլի անունով։ Պորտուգալիայում արդէն ծրագիր էր կազմուում մի նոր, ուղիղ գծով հաղորդակցութիւն հաստատելու Եւրոպայի և Ասիայի ափերի մէջ, փոխանակ Աֆրիկայի հարաւային կողմով շրջան առնելու՝ երբ պատահմամբ, նաւակոծութեան հանդիպելով, այնտեղ եկաւ Քր. Կոլոմբոս։ Նա այստեղ տեղեկացաւ, որ Ֆլորենցայի նշանաւոր բժիշկ և աշխարհագրագէտ Տոսկանելլին ունի շատ հմուտ կերպով կազմուած մի ծրագիր դէպի արևմուտք ճանապարհորդութեան համար։ բանակցութեան մէջ մտաւ նորա հետ։ ստացաւ նորանից քարտէզներ և կարևոր հրահանգներ։ որոնցով առաջնորդուելով և կարողացաւ իւր մեծ գիւտն անել։ Տոսկանելլին այդ ժամանակ արդէն մեռած էր։ ուստի և նորա գաղը պաշտպանող չեղաւ ու նա մնաց անյայտ։ Այդ անուան ասպարէզ գալն այժմ այն նշանակութիւնն ունի։ որ Ամերիկայի գիւտն այլ ևս իբրև մի համարձակ քայլի հետևանք կամ բաղդի բերմունք պէտք է չհամարուի։ այլ վերածնութեան դարում սկսուած գիտնական լուրջ աշխատութեան արդիւնք։

* * *

ՍՈՒՐ ՄՏՔԵՐ։

Առանձնութիւնը այնպիսի վայելք է։ որ ոչ ոքի հետ բաժանել չի կարելի։

Ոսկւով ծախած խօսքերը ոսկէ խօսքեր չեն լինում։

Շատ մարդիկ կարծում են՝ առաքինութիւնն ուրիշ ոչինչ է։ բայց եթէ խիստ լինել դէպի օտարները։

Շատերը բաղդը ձեռքից բաց են թողնում՝ բաղդ որոնելու համար։

Թշնամիներին մարդ աւելի է յիշում։ քան բարեկամներին։

Ցեխոտ փողոցով անցնելիս։ ինչքան և դու ինքըդ զգոյշ լինիս՝ ուրիշները քեզ կցեխոտեն։

Եթէ մենք ինքներս այնչափ շատ պակասութիւններ չունենայինք՝ այնպիսի մեծ զուարճութիւն չէր պատճառի մեզ ուրիշների մոտ պակասութիւններ գտնելը։

Ամենալաւ մխիթարութիւնը օգնութիւնն է։

Ամենաբաղդաւորները նոքա են։ որոնք բաղդի կարիք չունին։

Որչափ մարդու հաստատակամութիւնը պակասում է։ այնչափ աւելանում է կնոջ զօրութիւնը։

Համեստ մարդիկ յաճախ օտարների նախանձի պատճառով են սկսում ուշադրութիւն դարձնել իրենց առաւելութիւնների վերայ։

Որչափ շատ բան կայ մէկի մէջ՝ նոյնչափ շատ գտնում է նաև ուրիշների մէջ։

Համեմատիր ունեցածդ ուրիշների ունեցածի հետ՝ բաղդ կայ։ որ կաւելացնես։ բաղդ կայ։ որ կկորցնես։

Կան սիրուն ծաղիկներ ճանապարհի վերայ ծաղկած։ որոնցով ոչ ոք չի հետաքրքրուում. բայց եթէ տանես ժայռերի գլխին ու ձորերի խորքում տնկես՝ շատերը շլինք կկոտրեն ձեռք բերելու համար։

Ա. Իմ գանձը իմ գիտութիւնն է։—Բ. Ո՞րտեղ էք թաղել ուրեմն այդ գանձը։

ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ

ՔԱՐՈԶՔ ՄԵՐ ՄԷՋ.

Տարուայ այն օրերն են։ երբ մեր եկեղեցւոյ բեմից եւս։ թէպէտ ղժբաղդաբար ոչ ամեն տեղ՝ քարոզ է լսուում։ Ցանկալի էր և հարկէ։ որ Տիրոջ կենդանի խօսքի քարոզութիւնը Իւր տաճարներից երբէք։ տարուայ ոչ մի ժամանակ։ պակաս չլինէր. սակայն զոհ լինինք առայժմ այս սակաւ օրերով եւ հարցնենք՝ արդեօք ի՞նչ չափով գոնէ այդ սահմանափակ շրջանի մէջ քարոզի պահանջը լրումն է գտնում մեզանում։

Պէտք է խոստովանենք։ որ մենք ինքներս այնչափ փորձառութիւն եւ ընդարձակ ծանօթութիւններ չունինք։ որ կարողանայինք բազմակողմանի կերպով քննադատել եղածը։ թերութիւններն ու զեղծումները ցոյց տալ եւ ուղիղ ճանապարհ գծել. բայց այդ չի արգելում՝ անշուշտ։